ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հաամիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-152

Արտակ Ասատրյան
Հայաստանի պատմության թանգարան
sardarapatasatryan@gmail.com

ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

(Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ)*

Հիմնաբառեր: Արևելյան Հայաստան, պղինձ, պղնձագործություն, պղնձարդյունաբերություն, Լոռի, Շիրակ, Սյունիք (Զանգեզուր):

Մուտք

Մեր նախորդ աշխատանքում անդրադարձել էինք 19 – 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող պղնձագործական կենտրոններին, արհեստավորների քանակին, վարպետներին, առևտրին, մասամբ նաև արհեստագործական եղանակներին ու համքարություններին՝ փորձելով այս կերպ տալ մետաղագործական արհեստի այս կարևոր ճյուղի ընդհանուր բնութագիրը, տեղն ու դերը հայոց մեջ (Ասատրյան 2023, 104 – 123): Սույն աշխատանքում կանդրադառնանք նշված ժամանակահատվածում Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող պղնձի արդյունաբերության և պղնձագործական արհեստի պատմության լուսաբանմանը, քանի որ այդ ժամանակ, ինչպես կտեսնենք հաջորդիվ, այս երկու իրողությունները գոյություն ունեին իրար զուգահեռ:

Աշխատանքի մեթոդաբանությունը

Ելնելով վերը ասվածից՝ աշխատանքը պայմանականորեն բաժանել ենք երկու հիմնական՝ **պղնձի արդյունաբերության** և **պղնձագործական արհեստի** պատմության (այս և հաջորդ ընդգծումները հեղինակինն են) բաժինների՝ հիմք ընդունելով պատմական և ազգագրական համեմատական մեթոդի կիրառումը:

Աշխատանքն առավել ընկալելի և համակարգված դարձնելու նպատակով նախ համառոտ պատմական անդրադարձ ենք կատարել 19 – 20-րդ դարասկզբում, ինչպես նաև դրանից առաջ գոյություն ունեցող պատմա-քաղաքական իրադարձություններին և վարչաքաղաքական բաժանումներին, որովհետև, ինչպես և մեր նախորդ աշխատանքում (Ասատրյան 2023, 104 – 123), այստեղ նույնպես դրանք սերտորեն փոխկապակցված են և բխում են մեկը մյուսից:

* Ստացվել է 19.07.2023 թ., ուղարկվել է գրախոսման 19.07.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

Ներածություն

16-րդ դարի սկզբներից մինչև 17-րդ դարի 30-ական թվականները Հայաստանը ռազմական թատերաբեմ էր դարձել իր հզորության գագաթնակետին հասած Օսմանյան կայսրության և Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի միջև (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր IV 1972, 81)։

1555 թ. Ամասիայի (թուրք-իրանական պատերազմների առաջին փուլ) և 1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրերով Հայաստանը բաժանվեց երկու՝ Արևմտյան և Արևելյան հատվածների՝ անցնելով Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր IV 1972, 85, 89։ Հայրապետյան 2005, 31, 32։ Բայբուրդյան 2005, 307, 329։ Բայբուրդյան, 2011, 228, 279։ Ակոպով, 2013, 55 – 56)։

Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ անցած Արևմտյան Հայաստանը բաժանվեց Էրզրումի (Կարին), Վանի, Սեբաստիայի (Սվազ), Ախալցխայի, Կարսի և Դիարբեքիրի էյալեթների՝ նահանգների (Մելքոնյան 2012, 6։ Հայաստանի ազգային ատլաս 2008, 55)։

Պարսկաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանն ընդգրկում էր Գուգարքը, Արշարունիքի (կամ Երասխաձոր, ներկայիս Կաղզվան) մի մասը, Շիրակի Արևելյան հատվածը՝ Գյումրի ավանով, Արարատյան դաշտը՝ Երևան քաղաքով, Ապարանի շրջանը՝ մինչև Լոռվա լեռները, Նոր Բայազետի և Նախիջևանի գավառները, Սյունիքը, Արցախն ու Վասպուրականի արևելյան մասը (Հայրապետյան 2005, 32։ Հայաստանի ազգային ատլաս 2008, 55)։

Պարսկական տիրապետության շրջանում Արևելյան Շիրակը (Շորագյալի սուլթանություն) Արարատ, Վարաժնունիք (Դարաչիչագ), Նիգ (Ապարան), Մազազ-Ուրծ-Մասյացոտն (Գառնի-Վեդի), Ճակատք (Սուրմալու), Արագածոտն (Կարբի), Կոտայք (Գրխբուլաղ) և Սյունիք աշխարհի Գեղարքունիք ու Սոդք գավառների հետ մտնում էր Զուխուր-Սաադ կամ Զուգուր Սաադ կոչված կուսակալության մեջ, որ առաջացել էր արդեն 14-րդ դարի վերջերին[1], կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակ և սկզբնական շրջանում ներառում էր նախկին Երասխաձոր և Ճակատք գավառներն ու դրանց մերձակա մի քանի շրջանները։ 16-րդ դարում էլ ավելի ընդարձակվելով, այս կուսակալությունն ընդգրկում էր նախկին Այրարատյան աշխարհի մեծագույն մասը, իսկ 18-րդ դարում, ըստ ժամակակակից հեղինակի, Երևանի բեյլերբեյությանը՝ նույն Զուխուր-Սաադի կուսակալությանը, ենթակա էին Ղափանը, Զուղան, Սիսիանը, Քաշաթաղը, Երևանը, Կըրխ-Բուլաղը, Աղստաֆան, Ապարանը, Դմանիսը, Ալգետը, Չըլդըրը և շատ այլ շրջաններ (Հայրապետյան 2005, 34)։

1795 թ. ռուսական ազդեցությունն Արևելյան Այսրկովկասում թուլացնելու և վերացնելու նպատակով մեծ արշավանք ձեռնարկեց Աղա-Մահմեդ խանը (1796 թվականից Պարսկաստանի շահ)։ Նա պաշարեց Շուշին, սակայն գրավել չկարողացավ, որից հետո շարժվեց Թիֆլիս, ավերեց ու կողոպտեց այն, իսկ բնակչությունը

1 Զուխուր-Սաադի վիլայեթի մասին մանրամասն տես Փափազյան 1960, 22 – 40։ Մեշքանբարյանս 2021, 267 – 280։

բռնագաղթեց: Հասկանալով, որ Ռուսական պետության շահերը և հեղինակությունը խիստ վտանգված են, 1796 թ. Եկատերինա 2-րդը կարգադրեց Պլատոն Զուբովի ղեկավարությամբ զորք մտցնել Այսրկովկաս: Եկատերինա 2-րդի մահվանից հետո գահ բարձրացած Պավելը, որ աշխատում էր ամեն ինչում հակադրվել մորը, կարգադրեց ռուսական զորքին վերադառնալ: Այսրկովկասի ռուսական զորքերի կողմից գրավման երկրորդ փորձը ևս անհաջող ստացվեց: 1797 թ. Աղա-Մահմեդ խանն իրականացրեց իր երկրորդ արշավանքը դեպի Այսրկովկաս: Այս անգամ նա գրավեց Շուշին, նրա զորքերն ավերակ դարձրին Այսրկովկասի շատ շրջաններ, սակայն ինքն էլ շատ չանցած սպանվեց իր մահմեդականացված հայ ծառայի կողմից: Աղա-Մահմեդ խանն սպանվեց, սակայն պարսկական տիրապետությունն ամրապնդվեց Արևելյան Այսրկովկասում: Քայքայված և հյուծված Քարթլ-Կախեթի թագավորությունը՝ հանձին Հերակլ 2-րդ թագավորի, խնդրեց ռուսական ցարին՝ թագավորությունը վերցնելու իր հովանավորության ներքո, ինչը տեղի ունեցավ 1800 թվականին: Վրաց վերջին թագավոր Գեորգի 12-րդի (1798 – 1800) մահվանից հետո Պավելին փոխարինած Ալեքսանդր 1-ին կայսեր 1801 թ.սեպտեմբերի 12-ի Մանիֆեստով Վրաստանը (այդ թվում նաև՝ Հյուսիսային Հայաստանի մի մասը) միակցվեց Ռուսաստանին: Ռուսական տիրապետությունը հաստատվեց Այսրկովկասի նշանակալից մասում: Սակայն Քարթլ-Կախեթի թագավորության վերացումը և նրա տարածքի միացումը Ռուսաստանին սոսկ վրացական խնդիր չէր, քանի որ դրանով **սկսվեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Քարթլ-Կախեթի թագավորության մեջ էին մտնում Լոռին իր շրջակայքով, Ղազախի մոուրավությունը և Շամշադինի սուլթանությունը, որոնցից առաջինն ամբողջությամբ, իսկ մյուսները մեծամասամբ ունեին հայկական բնակչություն և մասն էին կազմում Արևելյան Հայաստանի** (Հայաստանի ազգային ատլաս 2008, 67, 68, 72: Ամիրջանյան, 2007, 184):

1805 թվականին Ռուսական կայսրությանը միացվեցին Գանձակի, Շաքիի, Շիրվանի խանությունները, իսկ 1813 թվականի հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով՝ Ղարաբաղի խանությունը՝ իր հայկական տարածքներով, մասնավորապես Խամսայի մելիքություններն ու **Սյունիքի հայկական իշխանությունները** և Թալիշի խանությունը: Գյուլիստանի պայմանագրով ավարտվեց Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման երկրորդ փուլը: 1828 թվականին Ռուսական կայսրությանը միացվեցին Երևանի և Նախիջևանի խանությունները (Հայաստանի ազգային ատլաս 2008, 67, 68, 72, 73, 87):

Արևելյան Հայաստան ասելով ի նկատի ունենք վերը նշված վարչատարածքային միավորները, մասնավորապես՝ Լոռին, Շիրակը և Սյունիքը, որոնք միաժամանակ իրենցից ներկայացնում էին նաև առանձին պատմա-ազգագրական շրջաններ՝ իրենց բնորոշ տնտեսա-մշակութային տիպերով (Լիսիցյան 1969: Маркарян и др., 1983, 77, 105 – 109) և կազմում են այսօրվա Հայաստանի Հանրապետության մասը (Gevorgyan, Bobokhyan 2014, 47 – 98):

Հանքահանության և պղնձարդյունաբերության գործը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի վերջում և 20-րդ դարասկզբին

Չնայած հանքային հարուստ պաշարների առկայությանը, Արևելյան Հայաստանում 19-րդ դարի սկզբին, խանական կառավարության ժամանակ, օգտակար հանածոներից արդյունահանվում էր միայն աղ և փոքր քանակությամբ պղինձ (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 32):

Պղնձի հանքավայրերը գտնվում էին Դարալագյազում (ներկայիս Վայոց ձորի մարզի տարածքում՝ Վարդենիսի լեռնաշղթային մոտ) և Դարաչիչագում (Վարաժնունիք): Սարդարական կառավարության վերջին տարիներին Միսխանայում բնակություն էին հաստատել մի շարք հույն ընտանիքներ, որոնք էլ զբաղվում էին պղնձի արդյունահանությամբ, սակայն ինչպես պղնձի հանույթը, այնպես էլ ստացված շահույթը այստեղ խիստ աննշան էր և առանձին զարգացում չունեցավ (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 34: Հայաստանի ազգային ատլաս, 2007, Հատոր Ա, 18 – 19, 39: Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Բ 2008, 64, 72, 106 – 107):

Լոռվա (ներկայիս ՀՀ Լոռու մարզ) պղնձահանքերից հատնի են հատկապես երկուսը՝ Ալավերդու և Շամլուղի հանքավայրերը (Մելքումյան, 2005, 18: Պոտոսյան, 2022, 42: Gevorgyan, Bobokhyan 2014, 49):

Պղնձի հարուստ պաշարներ կան պատմական Սյունիքում (ներկայիս ՀՀ Սյունիքի մարզ), որոնց մի մասը մինչև այժմ էլ շահագործվում է (Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Ա 2007, 39, 156): Հարուստ պաշարներ կան Կապանում, Ողջի գետի վերին հոսանքի ավազանում՝ Քաջարան քաղաքի շրջակայքում, Մեղրուց 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Ագարակ ավանի մոտ, Սիսիանի բազմաթիվ վայրերում և այլն: Այդ հանքերը պղնձից բացի պարունակում են նաև գունավոր այլ մետաղներ: Մի քանի տեղ նկատված են երկաթի հանքեր (Հակոբյան 1966, 24: Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Ա 2007, 39: Gevorgyan, Bobokhyan 2014, 66): Խոշորագույն հանքավայրերից են Քաջարանինն ու Ագարակինը: Մասամբ պահպանվում է նաև Դաստակերտի հանքավայրի դերը (Պոտոսյան 2022, 42: Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Ա 2007, 39):

Ռուսական կայսրությանը Վրաստանի միացումը մեծ հետաքրքրություն առաջացրեց միացված տարածքների հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրության և հայտնաբերման նկատմամբ: Այդ նպատակով արդեն 1802 թ. փետրվարին կազմակերպվում է հատուկ լեռնային արշավախումբ, տարածքի լեռնահանքային արդյունաբերությունը (մասնավորապես՝ Ալավերդու և Ախթալայի) կարգավորելու և վերագործարկելու նպատակով, որոնց աշխատանքները խաթարվել էին 1785 թ. Օմար խանի գլխավորած լեզգիական հարձակումների ժամանակ: Տվյալ արշավախմբի ղեկավար է նշանակվում Ռուսաստանի «Բերգ-կոլեգիայի» անդամ, ավագ կոմս Ապպոլոս Մուսին-Պուշկինը (1760 – 1805), որը նույն թվականի մայիսի վերջերին իր օգնականների, այդ թվում՝ լեռնային ճարտարագետներ (բերգաուերներ) Իվան Իվանովիչ Էյխվալդի (1780 – 1828), Ա. Ա. Բորզունովի և այլոց հետ ժամանում է Թիֆլիս և այնտեղից հավանաբար Սադախլո –

Բերդաձոր – Շամլուղ կարճ ճանապարհով ժամանում է Ախթալա ու Ալավերդի և կատարում համապատասխան ուսումնասիրություններ Ախթալայի արծաթ – ոսկի-բազմամետաղային և Ալավերդու պղինձ-հրաքարային հանքավայրերում ու դրանց հարակից տարածքներում (Մելիք-Ադամյան և ուրիշներ, 2021, 158: Gevorgyan, Bobokhyan 2014, 69):

1802 թ. հունիսի երկուսին նա պայմանագիր է կնքում Միսխանայի (ներկայիս ՀՀ կոտայքի մարզի գյուղ Հանքավան, հին անունը՝ Միխայլովկա-Gevorgyan, Bobokhyan 2014, 63) նախկին կապալառուների և հանքագործ վարպետների հետ, որի համաձայն կարգավորվելու էին հարաբերությունները պետության և պղնձահանքերը մշակողների միջև: Պետությունը պարտավորվում էր գյուղացիական կարգախմբեր տրամադրել փայտածուխ պատրաստելու և հանքավայրեր տեղափոխելու համար: 1803 թ. փետրվարի երեքին պայմանագիր է կնքվում Լոռու կալվածատերերի՝ Արղության-Երկայնաբազուկների և Մելիքովների հետ, որոնք պետք է հանքավայրերը և հարակից հողամասերն ու անտառները տրամադրեին պետությանը՝ հանքերը շահագործելու համար (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 34 – 35):

Արշավախմբի հաջող գործունեության արդյունքում արդեն իսկ 1804 թ. հնարավորություն ընձեռվեց Թիֆլիսում բացելու ռուսական պետական դրամահատարան, որտեղի հատվող պղնձե և արծաթե դրամների հումքը ստացվում էր վերոնշյալ գործարաններից (Մելիք-Ադամյան և ուրիշներ, 2021, 158 – 159):

Պղինձ արտադրվում էր փոքր քանակությամբ՝ 7500 փութ, որը հիմնականում օգտագործվում էր տեղական արհեստավորների կողմից՝ տնային գործածության իրեր պատրաստելու համար: Այդ տարիներին Անդրկովկաս այցելած անգլիացի Ջոնսոնը գրում է, որ «Կառավարությունը մտադիր է քաջալերել պղնձե ամանեղենի արդյունաբերությունը Թիֆլիսում՝ որպես առևտրի առարկա: Փաստորեն պատրաստ պղնձի քանակությունն այնքան շատ է, որ նրանք՝ բավականին արժանավոր իտալացի մի արտիստի ղեկավարությամբ, արձաններ են ձուլում. նա իր ռոճիկը ստանում է կառավարությունից: Կարծում եմ, որ սկսած են ձուլել նաև փոքրիկ դաշտային թնդանոթներ» (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 35):

Ռուս-պարսկական 1826 – 1828 թվականների պատերազմից անմիջապես հետո[2] ռուսական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց Արևելյան Հայաստանի հանքային հարստություններից երկուսի՝ աղի և պղնձի արտադրության կազմակերպմանը և ընդլայնմանը: Ցարական կառավարությունը լուրջ ուշադրություն դարձրեց Հայաստանի պղնձարդյունաբերությանը՝ Ալավերդու և Ջանգեզուրի պղնձահանքերին (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 264, 265):

1845 թ. Հայաստան եկավ ռուս չինովնիկ Ռոզովը: Նա Ագարակ (ՀԽՍՀ Մեղրու շրջան) և Փիրդոուդան (ՀԽՍՀ Ղափանի շրջան) գյուղերի մոտակայքում հին

2 1828 թ. Ռուսական կայսրությանը միացվեցին Երևանի և Նախիջևանի խանությունները Այս մասին մանրամասն տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Բ 2008, 67, 68, 72, 73, 87:

փորատներում կառուցում է պղնձաձուլական գործարաններ, որտեղ Թուրքիայից մշտական աշխատանքի են գալիս 150 հմուտ հույն հանքագործներ: 1850-ական թթ. սկսում են գործել նաև Ղաթարի, Հալիձորի, Ուգուրչայի, Նյուվադիի, Բարաբաթումի պղնձաձուլական գործարանները: 20 տարում (1847 – 1867 թթ.) Հայաստանում շահագործման հանձնված 11 պղնձաձուլարաններից 7-ը գործում էին Զանգեզուրում: Միաժամանակ ավելանում է նաև աշխատողների թիվը, 1866 թ. այն հասնում էր 867 մարդու՝ կազմելով Հայաստանում պղնձահանքային արդյունաբերության մեջ աշխատողների 70 տոկոսը (Ասլանյան, Ավետիսյան, 1975, 80 – 81):

1868 թ. պղնձարդյունաբերական 10 ձեռնարկություններում ձուլվել էր 15860 փութ պղինձ, իսկ բոլոր ձեռնարկությունների աշխատողների թիվը հավասար էր 1230-ի, որից հիմնական բանվորներ՝ 656, օժանդակ՝ 574: 1870 թ. աշխատողների քանակն այդ բոլոր գործարաններում հասնում էր 987-ի, որից 567-ը հիմնական բանվորական կազմն էր, իսկ մնացածը՝ օժանդակ (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 265):

Ալավերդու, Շամլուղի և Ախթալայի ձեռնարկություններում պղնձի արդյունահանությունը 1857 – 1870 թթ. ունեցել է ընդամենը 5,3 տոկոս աճ, մինչդեռ Զանգեզուրի մեջ մտնող Կավարտի, Ղաթարի, Փիրոուդանի, Ագարակի և Հալիձորի ձեռնարկություններում այդ աճը հասել է 381,4 տոկոսի: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ Զանգեզուրի ձեռնարկությունները նոր էին և շատ ավելի արագ տեմպերով էին աճում (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 265 – 266):

1847 – 1867 թթ. Հայաստանում շահագործման հանձնված 11 պղնձաձուլարաններից 6-ը՝ այդ թվում Ագարակինը, Բարաբաթումինը և Փիրդոուդանինը շուտով փակվեցին՝ ցածր տեխնիկայի և ֆինանսական սղության պատճառով: Հայաստանի պղնձահանքային արդյունաբերության զարգացմանը մեծապես նպաստեց օտարերկրյա կապիտալի ներթափանցումը, երբ ֆրանսիական ակցիոներական ընկերության ձեռքն անցան Ալավերդու պղնձաձուլական գործարանները, իսկ տեղական արդյունաբերողներն իրենց ուշադրությունն ամբողջապես կենտրոնացրին Զանգեզուրի վրա (Ասլանյան, Ավետիսյան, 1975, 81):

1911 թ. ֆրանսիական ակցիոներական ընկերությունը իր հսկողության տակ վերցրեց նաև Սյունիքի, Ղաթարի պղնձաձուլարաններն ու հանքահորերը: Զանգեզուրում 1900 թ. ձուլվել է 51783 փութ, 1901 թ. 57820 փութ, 1903 թ. 65063 փութ պղինձ, իսկ 1913 թ.՝ 112850 փութ (1850 տոննա) պղինձ (Ասլանյան, Ավետիսյան, 1975, 81):

Պատմա-ազգագրական համառոտ ակնարկ

19-րդ դարում Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում գյուղատնտեսությունից հետո զգալի դեր էր խաղում արհեստագործությունը, որով գլխավորապես զբաղվում էին քաղաքներում: Գյուղերում նույնպես կային արհեստագործության առանձին ճյուղեր, որոնք կոչված էին բավարարելու տեղական կարիքները (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 31: Թառայեանց, 1898, 3 – 71): Գոյություն ունեին շուրջ հարյուր տեսակ արհեստներ, որոնք բավարարում էին բնակչության

և խանական արքունիքի ամենատարբեր պահանջները: Դրանցից էին … դարբնությունը, ներկարարությունը, պղնձագործությունը, գինեգործությունը, … արծաթագործությունը, հյուսնությունը, թամբագործությունը, և այլն… (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 31, 32): Տեղեկություններ են պահպանվել, որոնք վկայում են թնդանոթաձուլական ձեռնարկության մասին, որը, ըստ երևույթին եղել է զինագործական արհեստանոց, որտեղ Երևանի բերդի պաշտպանության համար փոքր քանակությամբ թնդանոթներ են պատրաստվել: Այն իր գոյությունը դադարեցրել է 1826 – 1828 թթ. Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 32):

Արևելյան Հայաստանում, Ռուսաստանին միացվելուց հետո, արհեստագործությունը մնում էր արտադրական գործունեության հիմնական ճյուղը: 1830 – 1860-ական թթ. արհեստագործական արտադրության քանակի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան. դրանք ավելի շատ վերաբերում են արհեստավորների քանակին՝ արհեստագործության մի քանի տասնյակի հասնող ճյուղերում և հիմնականում՝ 20-ական թվականների վերջերին և 30-ական թվականների սկզբներին (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 258):

Որոշ տվյալներ կան 1860-ական թվականների վերաբերյալ: Եթե 1829 – 1832 թթ. Հայկական մարզի երեք քաղաքներում՝ **Երևանում**, **Նախիջևանում** և **Օրդուբադում** արհեստավորների թիվը կազմել է համապատասխանաբար 2349, 717 և 608, ապա 1895 թ.՝ 3228, 840 և 740 մարդ: Հետևաբար՝ 30 – 35 տարվա ժամանակամիջոցում արհեստավորների քանակական աճը տոկոսային հարաբերությամբ կազմել է Երևանում 38, Նախիջևանում 17, Օրդուբադում՝ 29 տոկոս: Ալեքսանդրապոլում և Նոր Բայազետում արհեստավորների թիվը համապատասխանաբար կազմել է 2695 և 391: Այսպիսով՝ Երևանի նահանգի արհեստավորների ընդհանուր թիվը 1865 թ. հավասար էր 7995-ի, որոնցից վարպետներ՝ 3663, ենթավարպետներ՝ 2117 և աշակերտներ՝ 2215 (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 258):

Արևելյան Հայաստանում փոքր թիվ չէին կազմում այն արհեստավորները, որոնք պղնձից կաթսաներ էին պատրաստում և վաճառում գյուղերում: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ 1886 թ. Ալավերդու գործարանում ձուլված 5435 փութ պղնձից 2000 փութն օգտագործվել է ամանեղեն պատրաստելու համար: Այդ արտադրաճյուղում զբաղված էին 75 արհեստավորներ, որոնք էլ հենց պատրաստի ամանեղենը վաճառքի էին հանում գյուղերում: 1870 թ. Ալավերդիում ձուլված 4572 փութ պղնձից նույն նպատակով օգտագործվել է 1100 փութը (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 259):

19-րդ դ. երկրորդ կեսին և 20-րդ դ. սկզբին հայ ժողովրդի արհեստագործությունը, ընդհանուր առմամբ, բաժանվում էր երկու տիպի՝ գյուղական/ընտանեկան և քաղաքային/ձեռնարկատիրական (Թառայեանց 1898, 7 – 8): Ի թիվս գոյություն ունեցող արհեստների՝ «սապոնի և մոմի, բրդեղենի պատրաստութիւն» (սրանով զբաղվում էին հիմնականում կանայք), «փայտեղէն գործիքներ կամ կարասիք շինող» (հյուսնություն – Ա. Ա.), կաշեգործություն («տիկեր կամ մօթալներ ոչխարի մորթուց») կոշկակարություն, «սայլ շինողներ», ներկարարություն, քարտաշություն

և այլն (Թառայեանց, 1898, 23 – 68), նշվում է նաև պղնձագործությունը (Թառայեանց 1898, 69 – 71): Հեղինակը խոսում է «Գէօգչայի Լահիճ» գյուղի մասին՝ նշելով, որ այդ «մեծ գիւղի ազգաբնակչութեան նշանաւոր մասը պղնձագործներ են» (Թառայեանց 1898, 69): Այստեղ նույնպես պահպանվել էին արհեստի ավանդական եղանակները և կար աշխատանքի որոշակի բաժանում: «Գումարատերը» (առևտրականը կամ վաճառականը – Ա. Ա.) գնում էր անհրաժեշտ քանակությամբ պղինձ, բաժանում տեղի արհեստավորներին, որոնք պատրաստում էին անհրաժեշտ պղնձեղենը՝ աշխատանքի դիմաց ստանալով որոշակի գումար (Թառայեանց 1898, 69):

Պղնձագործի գործիքները, «բացի սալից և սղոցներից», **պատրաստում էին տեղական դարբինները**: Ձուլած պղնձից թիթեղներ էին ստանում, որոնցից այնուհետև պատրաստում էին այն, ինչ անհրաժեշտ էր: Սա գործի ամենադժվար մասն էր, որով զբաղվում էր մեկ վարպետ՝ տասներեք բանվորներով: Պատրաստվում էր օրական տասը փութ պղնձաթիթեղ, որը բավական էր մեկ վարպետն ու իր երկու աշակերտներին մեկ ամսվա ընթացքում պղնձեղեն (պղնձե ամաններ և այլն) պատրաստելու համար (Թառայեանց 1898, 70):

Արևելյան Հայաստանի արհեստագործության գլխավոր կենտրոնը Երևանն էր: Արհեստագործությունը բավականաչափ զարգացած էր նաև Վաղարշապատում, որտեղ զանազան մասնագիտությունների տեր արհեստավորներ հոգում էին Էջմիածնի վանական խոշոր տնտեսության ամենատարբեր կարիքները (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 31):

Երևանի արհեստավորությունը սպասարկում էր միայն տեղական պահանջարկը, թեև արհեստավորների մեծ մասը հենց այստեղ էր կենտրոնացած: Երևանյան նահանգի քաղաքներից միայն Ալեքսանդրապոլի արհեստավորներն էին. որ սպասարկում էին ոչ միայն տեղական պահանջարկը, այլև իրենց արտադրանքն ուղարկում էին Անդրկովկասի վարչական կենտրոն՝ Թիֆլիս և անգամ արտահանում Թուրքիա (Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V 1974, 258):

Ալեքսանդրապոլ (Գյումրի)

Ռուսական կայսրությանը միացած Արևելյան Հայաստանում 19-րդ դ. 30 – 40-ական թթ. կազմավորվեց մի քաղաք, որն իր կենցաղով, մշակութային համալիրով էականորեն տարբերվում էր Երևանի նահանգի մյուս քաղաքներից: Նորաստեղծ Ալեքսանդրապոլը դարձավ Արևմտյան Հայաստանի երեք հայտնի քաղաքների՝ Կարինի (Էրզրում), Կարսի և Բայազետի մշակութային ավանդույթների կրողն ու դրանց համակեցության լավագույն օրինակը (Բազեյան, Աղանյան 2014, 4): Ալեքսանդրապոլը հիմնադրվեց պատմական Կումայրի բնակավայրի հարակից տարածքում՝ Ախուրյանի ձախ ափին՝ ներառելով երկու փոքրիկ գետակ՝ Գյումրի չայը և Ղորղոբան (Բազեյան, Աղանյան 2014, 5):

19-րդ դ. առաջին քառորդին Գյումրին իբրև բնակավայր ոչ մի հեռանկար չունեցավ, քանի որ Հայաստանի Արևելյան հատվածը շարունակում էր գտնվել պարսկական տիրապետության ներքո, որտեղ շինարարական գործունեություն ծավալելու համար տնտեսական հնարավորությունները սահմանափակ էին:

Դրությունն զգալիորեն փոխվեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելուց հետո, երբ ցարական քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից, թեկուզ դանդաղ, սակայն որոշակի հետևողականությամբ ու ծրագրով իրականացվող քաղաքաշինական միջոցառումների արդյունքում Հայաստանի տարբեր շրջաններում իրար հետևից վերակառուցվեցին կամ հիմնվեցին նոր քաղաքներ, որոնց թվում էր արևմտահայ գաղթականների կողմից Գյումրի գյուղի հարավային մասում՝ Ախուրյանի ձախ ափին հիմնված և 1837 թ. քաղաքի կարգավիճակ ստացած Ալեքսանդրապոլը (Բազեյան, Աղանյան 2014, 7):

Ադրիանապոլսի պայմանագրի կնքմանը հաջորդած արևմտահայության ներգաղթի արդյունքում 14000 ընտանիքներից 3491-ը հաստատվեց Շիրակում, այդ թվում՝ Գյումրիում և դարձավ ապագա Ալեքսանդրապոլի բնակչության հիմնական կորիզը (Բազեյան, Աղանյան 2014, 7 – 8): 1829 – 1831 թթ. արևմտահայերի մեծ գաղթը ռուսահպատակ դարձրեց Կարսի գրեթե ողջ քրիստոնյա բնակչությանը՝ 693 ընտանիքի կամ շուրջ 5000 – 5500 մարդու: Ռուս-թուրքական սահմանն անցած կարսեցիների 600 ընտանիք, այդ թվում նաև 150 ընտանիք հույներ տեղավորվեցին Գյումրիում (Բազեյան, Աղանյան 2014, 8: Բաղալյան 2015, II):

Կարսեցիների հետ միաժամանակ Արևմտյան Հայաստանի տարածքից գաղթեցին նաև Բայազետի փաշայության քրիստոնյաները: Բայազետցիները, հիմնականում քաղաքից գաղթածները, հաստատվեցին ապագա Նոր Բայազետում և Գյումրիում: Գաղթից հետո Գյումրու բնակչության մեջ բայազետցիները թվով երկրորդն էին կարսեցիներից հետո և կազմում էին Գյումրիում տեղավորված կարսեցիների քանակի կեսը՝ մոտ 300 ընտանիք (Բազեյան, Աղանյան 2014, 8 – 9):

Ռուսական իշխանությունների որոշմամբ էրզրումցիները հաստատվելու էին Ախալքալաքում և Ախալցխայում, սակայն գաղթի վերջում Կարս հասած էրզրումցի 200 ընտանիք նույնպես հաստատվեց Գյումրիում: Էրզրումցիների հետ Գյումրիում հաստատվեցին նաև 30 – 40 ընտանիք հայ բոշաներ (գնչուները կամ «մաղագործները»): 1829 – 1831 թթ. գաղթի ընթացքում ռուս-թուրքական սահմանն անցան ու Գյումրիում հաստատվեցին մոտ 100 – 120 ընտանիք բասենցիներ ու մշեցիներ (Բազեյան, Աղանյան 2014, 9):

Մինչև 19-րդ դ. կեսերը Արևմտյան Հայաստանի առևտրաարհեստավորական կենտրոնները ՝ Կարինը, Կարսը, Վանը, Երզնկան, Բայազետը, իրենց զարգացման բարձր մակարդակով և քաղաքային տնտեսության համախառն արդյունքով զգալիորեն գերազանցում էին ոչ միայն արևելահայկական քաղաքներին, այլև բուն Օսմանյան տերության, հարևան Պարսկաստանի ու Կովկասի բազմաթիվ քաղաքների: Արևմտահայ գաղթականներն իրենց հետ բերեցին վերոնշյալ կենտրոնների (Կարինի ու Կարսի արհեստավորական և հին Բայազետի առևտրական) բազմադարյան ավանդույթները և նոր բնակավայրերում՝ Ախալցխայում, Ախալքալաքում, Նոր Բայազետում և մասնավորապես Ալեքսանդրապոլում պարարտ հող գտան, ուր առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին՝ դրանք խորացնելու ու զարգացնելու համար (Աղանյան 2007, 78):

Ալեքսանդրապոլցի արհեստավորներն ու առևտրականներն արագ կողմնորոշվեցին հարևան երկրների շուկայի պահանջարկի խնդրում և շուտով մենաշնոր-

հային դիրք գրավեցին մի շարք ապրանքատեսակների արտադրության և արտահանման ասպարեզում (մետաղամշակության, փայտամշակության ապրանքներ, շինարարական արհեստներ, կաշվի, հացահատիկի և աղի արտահանում և այլն (Աղանյան 2007, 78):

Արհեստներն ու առևտուրն ալեքսանդրապոլցիների տնտեսական կենցաղի հիմնական բաղադրիչներն էին: Կարինցի, կարսեցի, և բայազետցի գաղթականների շնորհիվ քաղաքը շատ արագ վերածվեց Անդրկովկասի արհեստավորաառևտրական խոշոր կենտրոնի: Կարինցիների և կարսեցիների շնորհիվ քաղաքում հիմք դրվեց բազմաճյուղ և բարձրարվեստ արհեստների, իսկ ձեռներեց և հմուտ բայազետցիների շնորհիվ ծաղկեց առևտուրը: Քաղաքի կենտրոնում արագ աճեցին արհեստավորական շարքերը, որոնք հատուկ էին բազմաճյուղ արհեստավորական ավանդույթներ ունեցող հայկական միջնադարյան բոլոր քաղաքներին և պատահական չէր, որ այս ավանդույթն իր շարունակությունը գտավ Ալեքսանդրապոլում (Բազեյան, Աղանյան 2014, 19):

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին Ալեքսանդրապոլում գոյություն ուներ ավելի քան 100 արհեստ, այդ թվում նաև՝ պղինձ (կաթսա) պատրաստողներ՝ ղազանջիներ և պղնձագործ-անագապատողներ՝ ղալայջիներ (Բազեյան, Աղանյան 2014, 20 – 22): Ալեքսանդրապոլցի նշանավոր պղնձագործ վարպետներն էին Կարապետ Անտոնյանը, Խուրդայան Միքայելը (Ղալայջի Մկո), Սուրեն Ժամկոչյանը (պղնձագործ-մուշուրբա սարքող), Խուրադյան Կարապետը (Գյուման Կարո), կլայեկող անագագործ (Բազեյան, Աղանյան 2014, 26):

Սյունիք (Զանգեզուր)

Պղնձահանքերով հարուստ Սյունիքում (Զանգեզուր) մետաղի մշակությամբ մարդկությունը զբաղվել է դեռևս հնագույն ժամանակներից: «Գրեթե մինչև 19-րդ դարի 50 – 60-ական թթ. այստեղ իշխում էր հանքահանության նախնական, պարզունակ եղանակը. այս գործով զբաղվողները հանքը հանում էին համեմատաբար մակերեսային վայրերից՝ հասնելով դրան հորիզոնական փորված կարճ հանքահորերով և հանած քարը հալեցնում էին պարզունակ քուրաների մեջ՝ գործածելով մոտակա անտառներից բերած փայտը: Բանվորների ձեռքին հանքը քանդելու համար կար կարճ ու թեթև դուրը, որի գլխին խփում էին ծանր մուրճով, իսկ հանքաքարը դուրս էին կրում *քթոցնէրով*, իսկ ջուրը՝ *տիկէրով:* Հանքը գրաստներով էին տեղափոխում հալեցման վայրը: Այդ հանքահորերը լուսավորվում էին սև նավթով լցված ձեռքի ճրագներով, – նշում է հեղինակը և ապա շարունակում, – Զանգեզուրը միշտ ունեցել է ձուլված և զտված պղնձի մեծ պաշար և զարմանալի է, որ չի կրթել այնպիսի վարպետներ, ովքեր իրենց արհեստով հռչակված լինեին շրջակայքում. նույնիսկ տեղական պահանջները բավարարել են դրսից եկած լաիչեցի՝ լագիշեցի՝ լեռնեցի պղնձագործները, որոնք ոչ միայն նոր պղնձե ամաններ մատակարարողներ էին, այլև վնասված ամանների նորոգողներ ու կլեկչիներ (անագապատողներ – Ա. Ա.) (Լիսիցյան 1969, 166, 167)»:

Զանգեզուրում գործածվող պղնձե սպասքի (պղնձագործական արտադրանքի – Ա.Ա.) ոչ շատ, սակայն խիստ արժեքավոր տեղեկություններ ենք գտնում

կրկին Ս. Լիսիցյանի մոտ, որը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «Զանգեզուրի գյուղացին չի աշխատում ցուցադրել իր ամանները և պարծենալ հարստությամբ ու գեղեցկությամբ: Ամաններով պարծենալը, որ հատուկ էր արևմտյան հայությանը՝ Կարնո, Երզնկայի, Խարբերդի, Բալվի, ինչպես և Վանի, Մուշի, Կարճկանի գավառներում, Զանգեզուրի գյուղացուն տարօրինակ էր թվում: Նա մի առանձին ուշադրություն չէր դարձնում նրանց ամեն մեկի և ամբողջ ժողովածուի արտաքին գրավչության վրա և հետապնդում էր գերազանցորեն միայն նրանց գործնական նշանակության: Երբ մտնում էիր, օրինակ՝ Կարնո շրջանից Լենինականի, Ախալքալաքի կամ Ախալցխայի գյուղերը կամ Ալաշկերտից և Հին Բայազետի գավառներից Ապարան վերաբնակված հայ գյուղացու տունը, աչքը գրավում էր մի պատի մոտ դարակ-դարակ և հարկ-հարկ կանոնավոր և գեղեցիկ շարքերով դասավորված կավե ամանների ժողովածուն. տեսնում էիր, որ ամեն մի ամանի ձևի գեղեցկությունն ու մաքրությունը առանձին խնամքի են արժանացած: Նույնիսկ Լոռու գյուղերում Զանգեզուրին և՛ աշխարհագրական և՛ ազգագրական տեսակետներով մոտիկ շրջաններում, տանտիկինը ձգտում էր իր ամանները, մանավանդ պղնձեղենը, գեղեցիկ շարել մաքուր և գեղարվեստորեն շինած դարակալի վրա. նրա խոր և երես ափսեները, ջրի ամանները, կաթսաները լավ կլեկած ու մաքուր սրբված՝ պսպղում էին նույնիսկ մութ գլխատան աղոտ լույսի տակ: Զգացվում էր, որ այստեղ մի տուն մյուսի հետ մրցում էր իր ճաշակավոր ամանեղենով: Այդ չի նկատվում Զանգեզուրի գյուղացու մոտ, և ոչ միայն Խնձորեսկում և բուն Զանգեզուրի գյուղերում, որտեղ բնակչությունն իր որոշ մասով դեռ շարունակում էր ապրել քարայրներում, այլև ավելի հեռավոր մասերում, որտեղ գյուղերն ավելի ազատ են դասավորված համեմատաբար լայնարձակ տարածության վրա (Լիսիցյան 1969, 168): Զանգեզուրցի ընտանիքում, ինչպես և Փոքր Կովկասի հյուսիսային լանջերի գավառներում, ամանների մեջ պղնձեղենը ներկայացված է հարուստ ձևերով, սակայն ժողովրդական լայն գործածության մեջ եղած ամանները... պարզ գործեր են. առանց փորագիր կամ գունավոր զարդարման: Ճիշտ է, շատ հին և հարուստ ընտանիքներում պատահում էին վերին աստիճանի նուրբ նախշազարդ անոթներ, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ մի ժամանակ Զանգեզուրում պղնձագործության արհեստը եղել է ավելի բարձր կատարելության աստիճանի վրա, սակայն ենթադրությունը չի հիմնավորվում ուրիշ կից արհեստների մեջ ցուցաբերվող գեղարվեստական ճաշակով: Թվում է, թե ավելի ճիշտ կլինի այն եզրակացությունը, որ այդ նախշուն իրերի մեծագույն մասը դրսից մտած իրեր են, Շուշու արհեստանոցներից կամ ավելի հավանական է՝ Թավրիզից բերվող: Թավրիզից էին գալիս նույնպես տեղում մանավանդ կանանց զգեստի համար գործածվող կտորեղենների նուրբ ու թանկարժեք տեսակները» (Լիսիցյան 1969, 167):

Ահա թե ինչպես է նկարագրում Զանգեզուրի գավառամասի տիպական բնակարանների ներսույթը Ե. Լալայանը. «Զանգեզուր գաւառամասի տիպական բնակարանները արհեստական քարայրներն են, որոնք տեղական բարբառով քրատակ (քարի տակ) են կոչում: Հին ժամանակներում այս գաւառամասի գրեթե

բոլոր բնակարանները այդպիսի այրեր են եղել, իսկ այժմ բացի նրանցից շինում են և դարադամեր և կանոնաւոր տներ: ... Նրանք բաղկացած են միայն մի մեծ սենեակից, թէև կան և երկու սենեակ ունեցողներ: ... Այսպիսի բնակարաններում կահ-կարասիք չկան:

Մի երկու կապերտ և գուցէ մի գորգ-ահա նրանց ամբողջ կահաւորութիւնը: Քնում են գետնի վրայ, անկողինները թաղիքների վրայ ձգելով: Հիւր եկած միջոցին միայն փռում են գորգը, վերան մի ներքնակ ձգում և մի բարձ դնում, որ հիւրը նստի և բարձին կոթնի:

Մի **պղնձէ գիւգում կամ կուժ, մի քանի կաթսայ, մի սինի, մի քանի պղնձէ ափսե, մի թաս,** մի մեծ դանակ, մի քանի փայտէ գդալ, մի կասկարա, – ահա խոհանոցի բոլոր պիտոյքը» (Լալայան 1898, 59):

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք նշել, որ

ա) պղնձագործությունը Արևելյան Հայաստանում (ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, որտեղ ավանդական արհեստները, չնայած հասարակական-տնտեսական ու ռազմաքաղաքական ծանր պայմաններին, պահպանվել էին ավանդական ձևերով) 19 – 20-րդ դարասկզբին գոյություն է ունեցել և որպես արհեստ և որպես արդյունաբերական կարևոր ճյուղ,

բ) Սյունիք (Զանգեզուրի) վերաբերյալ վերը բերված երկու նկարագրություններն իրար հետ համեմատելով տեսնում ենք, որ դրանց մեջ եղած բովանդակային տարբերությունը մեծ չէ, և, որ ըստ էության Զանգեզուրի պղնձեղենը չունի Արևմտյան Հայաստանի պղնձեղենի գեղարվեստական լուծումների ճոխությունն ու շքեղությունը և առանձնանում է ձևերի ու հարդարանքի պարզությամբ,

գ) Ալեքսանդրապոլ-Գյումրիի արհեստներն ու արհեստավորական ավանդույթներն անմիջական շարունակությունն էին Արևմտահայ պղնձագործական կենտրոնների՝ Էրզրումի ու Կարսի և այս առումով տարբերվում էին Զանգեզուրի պղնձագործական արհեստի արտադրանքից և ավանդույթներից,

դ) վերոնշյալ երեք կետերը ի մի բերելով կարելի է նշել, որ 19 – 20-րդ դարասկզբի պղնձագործական արտադրանքն ուսումնասիրելիս այն կարելի է բաժանել, ինչպես հայկական տարազը, երկու հիմնական խմբի՝ արևելահայկականի և արևմտահայկականի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԿՈՊՈՎ 2013 – Ակոպով Ա., Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից մինչև XIX դարի I երեսնամյակը, Երևան, 2013:

ԱՂԱՆՅԱՆ 2007 – Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացման հիմնական միտումները (XIX դարավերջ – XX դարասկիզբ), (Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի Գիտական աշխատություններ), Հատոր X, Գյումրի, 2007, էջ 77 – 84:

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ 2007 – Ամիրջանյան Հ., Լոռին XVIII դ. վերջին – XIX դ. սկզբին և հայ-վրաց-ռուսական հարաբերությունները, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2007, № 2, էջ 180 – 195:

ԱՍԱՏՐՅԱՆ 2023 – Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (Պատմա-ազգագրական ակնարկ), Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, Երևան, 2023, № 1, էջ 104–123:

ԱՍԼԱՆՅԱՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ 1975 – Ասլանյան Ա., Ավետիսյան Խ., Ջանգեզուր (Աշխարհագրական ակնարկ), Երևան, 1975:

ԲԱԴԱԼՅԱՆ 2015 – Բադալյան Գ., Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին. Մաս երրորդ. Էրզրումի նահանգի կենտրոնական ու արևմտյան գավառները և Էրզրում (Կարին) ու Երզնկա քաղաքները, Վէմ համահայկական հանդէս, Երևան, 2015, № 4, Հավելված, էջ I–XLIII:

ԲԱՋԵՅԱՆ, ԱՂԱՆՅԱՆ 2014 – Բազեյան Կ., Աղանյան Գ., Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմազգագրական ուսումնասիրություն), Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ 2, Երևան-Գյումրի 2014:

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ 2005 – Բայբուրդյան Վ., Իրանի պատմությունը, Երևան 2005:

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ 2011 – Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմությունը, Երևան 2011:

ԹԱՌԱՅԵԱՆՑ 1938 – Թառայեանց Ս., Հայ ժողովրդի արհեստագործությունը, Ազգագրական հանդես, Գիրք Գ, Թիֆլիս, 1938, էջ 3–71:

ԼԱԼԱՅԱՆ 1898 – Լալայեան Ե., Ջանգեզուր, Ազգագրական հանդէս, Գիրք Դ, 1898, էջ 7–117:

ԼԻՍԻՑՅԱՆ 1969 – Լիսիցյան Ս., Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969:

ՀԱԿՈԲՅԱՆ 1966 – Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966,

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 1972 – Հայ ժողովրդի պատմություն, Հատոր IV, Երևան 1972:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 1972 – Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V, Երևան 1974:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍ – 2007 Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Ա, Երևան 2007:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍ 2008 – Հայաստանի ազգային ատլաս, հատոր Բ, Երևան 2008,

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2005 – Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ), Գյումրի 2005,

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ և ՈՒՐԻՇՆԵՐ 2021 – Մելիք-Ադամյան Հ., Խաչատրյան Հ., Հովհաննիսյան Ա., Բաբայան Տ., Ռուս և եվրոպացի ճանապարհորդները հյուսիսարևելյան Հայաստանում (մինչև 1820 թ.), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի Գիտական աշխատություններ, Գյումրի, 2021, № 3, էջ 155–162:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2012 – Մելքոնյան Ա., Արևմտյան Հայաստանը արևելք-արևմուտք առևտրական հարաբերությունների ոլորտում, Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ (Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի, 2011 թ.), Երևան, 2012, էջ 4–17:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ 2005 – Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան 2005:

ՄԵՇՔԱՆԲԱՐՅԱՆՍ 2021 – Մեշքանբարյանս Ժ., Սեֆյան դարաշրջանի սկզբնաղբյուրները որպես հայ ժողովրդի ԺԷ.–ԺԸ. դարերի պատմության աղբյուր, Բանբեր Մատենադարանի, Երևան, 2021, № 32, էջ 267–280:

ՊՈՏՈՍՅԱՆ 2022 – Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2022:

ՓԱՓԱԶՅԱՆ 1960 – Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.), Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1960, № 7 – 8, էջ 22 – 40:

МАРКАРЯН И ДР. 1983 – Маркарян Э., Арутюнов С., Мкртумян Ю. и др., Культура жизнеобеспечения и этнос (опыт этнокультурологического исследования на материалах армянской сельской культуры), Ереван, 1983.

GEVORGYAN, BOBOKHYAN 2014 – Gevorgyan A., Bobokhyan A., Metallurgy of ancient Armenia in cultural and historical context, Բանբեր Հայագիտության, Երևան 2014, № 1, էջ 47 – 98:

Artak Asatryan
History Museum of Armenia
sardarapatasatryan@gmail.com

COPPER INDUSTRY AND COPPERSMITHING IN EASTERN ARMENIA IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY – BEGINNING OF THE 20TH CENTURY (Historical-ethnographical survey)

Keywords: Eastern Armenia, copper, coppersmithing, Lori, Shirak, Syunik (Zangezur).

From the beginning of the 19th century, particularly after the accession of Eastern Armenia to Russia, the mining and copper industry experienced a certain development. The article summarizes the state of the copper industry of the mentioned period, as well as the state of copper craft, because these two existed in parallel and were somewhat interrelated with each other.

Артак Асатрян
Музей истории Армении
sardarapatasatryan@gmail.com

МЕДНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ И МЕДНОЕ ДЕЛО В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 19-ГО ВЕКА – НАЧАЛЕ 20-ГО ВЕКА (Историко-этнографический краткий очерк)

Ключевые слова: Восточная Армения, медь, медная промышленность, Лори, Ширак, Сюник (Зангезур).

С начала 19-го века, особенно после присоединения Восточной Армении к России, определенное развитие получила горнодобывающая и медная промышленность. В статье обобщено состояние медной промышленности указанного периода, а также состояние медного промысла, поскольку они существовали параллельно и были в некоторой степени взаимосвязаны друг с другом.

ԱՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ